Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2009 թվականի նոյեմբերի 11-ի №719Ա որոշմամբ

**«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար 14515-14739ՄՀց, 14935-15159ՄՀց, 22015-22281ՄՀց, 23023-23289ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության**

# Պայմանները

**(Թույլտվություն №0678, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 11-ի №719Ա որոշմամբ)**

## 1. Սահմանումներ

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Թույլտվություն ունեցող անձ կամ Լիցենզավորված անձ՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերություն.

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականությունների որոշակի հատվածներ օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները,

երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2009 թվականի նոյեմբերի 11-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2013 թվականի մարտի 3-ը:

## 3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Հայաստանի Հանրապետությունում ռադիոռելեային կապի գծերի շահագործմամբ օգտագործել 14515-14739ՄՀց, 14935-15159ՄՀց, 22015-22281ՄՀց, 23023-23289ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝
   1) ռադիոռելեային կապի գծերի շահագործման ժամկետի սկիզբ՝ մինչև 2010 թվականի փետրվարի 1-ը.
   2) ռադիոռելեային կապի գծերի անվանումը, ռադիոռելեային կայանների տեղադրման վայրերը և աշխարհագրական կոորդինատները՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը | Ռադիոռելեային կապի գծի կայանների տեղադրման վայրերը | | Աշխարհագրական կոորդինատները | |
|---|---|---|---|---|---|
| | | կայան 1 | կայան 2 | կայան 1 | կայան 2 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | YE08 - YE02 | ք.Երևան, Հալաբյան | ք.Երևան, Սարյան | | |
| 2 | YE03 - YE11 | ք.Երևան, Բագրատունյանց | ք.Երևան, Էրեբունի | | |
| 3 | VE1 - Vee | Արարատի մարզ, Վեդի | Արարատի մարզ, ք.Վեդի | | |
| 4 | AL1 - OZ1 | Լոռու մարզ, ք.Ալավերդի | Լոռու մարզ, Օձուն | | |
| 5 | AM1 - GU1 | Շիրակի մարզ, Ամասիա | Շիրակի մարզ, Գյումրի | | |
| 6 | AVT1 - ART1 | Արարատի մարզ, Արևշատ | Արարատի մարզ, Արտաշատ | | |
| 7 | AS2 - AS1 | Արագածոտնի մարզ, Աշտարակ | Արագածոտնի մարզ, Օշական | | |
| 8 | AB1 - FA1 | Կոտայքի մարզ, Աբովյան | Կոտայքի մարզ, Ֆանտան | | |
| 9 | FA1 - HR1 | Կոտայքի մարզ, Ֆանտան | Կոտայքի մարզ, Հրազդան | | |
| 10 | HR1 - TS1 | Կոտայքի մարզ, Հրազդան | Կոտայքի մարզ, Ծաղկաձոր | | |
| 11 | HR1 - SE1 | Կոտայքի մարզ, Հրազդան | Գեղարքունիքի մարզ, Սևան | | |
| 12 | EG1 - MET1 | Արմավիրի մարզ, Էջմիածին | Արմավիրի մարզ, ք.Մեծամոր | | |
| 13 | CV1 - ST1 | Լոռու մարզ, Չկալով | Լոռու մարզ, Ստեփանավան | | |
| 14 | OZ1 - CV1 | Լոռու մարզ, Օձուն | Լոռու մարզ, Չկալով | | |
| 15 | SN1- AL1 | Լոռու մարզ, Սանահին | Լոռու մարզ, Ալավերդի | | |
| 16 | VA2 – VA1 | Լոռու մարզ, ք.Վանաձոր, Ռուստավի | Լոռու մարզ, Վանաձոր | | |
| 17 | CH1 – FA1 | Կոտայքի մարզ, Չարենցավան | Կոտայքի մարզ, Ֆանտան | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18 | SI1 - GH1 | Սյունիքի մարզ, Սիսիան | Սյունիքի մարզ, Գորիայքի ՀԿ | | |
| 19 | GU2 - GU1 | Շիրակի մարզ, ք.Գյումրի երկաթուղային կայարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի | | |
| 20 | IJ1 – DI1 | Տավուշի մարզ, Իջևան | Տավուշի մարզ, Դիլիջան | | |
| 21 | YE04-YE07 | ք.Երևան, Ծերենց | ք.Երևան, Ծովակալ Իսակով | | |
| 22 | YE12-YE36 | ք.Երևան, Սայաթ-Նովա | ք.Երևան, Թումանյան | | |
| 23 | YE02-YE19 | ք.Երևան, Սարյան | ք.Երևան, Բաղրամյան | | |
| 24 | YE05-YE35 | ք.Երևան, Մոլդովական | ք.Երևան, Աճառյան 40ա | | |
| 25 | GRN1 – AVT1 | Կոտայքի մարզ, Գառնի | Արարատի մարզ, Արևշատ | | |
| 26 | YE05 – AB1 | ք.Երևան, Մոլդովական | Կոտայքի մարզ, Աբովյան | | |
| 27 | YE14-YE22 | ք.Երևան, Արշակունյաց | ք.Երևան, Խորենացի | | |
| 28 | YE15-YE27 | ք.Երևան, Ազատության | ք.Երևան, Դրոյի | | |
| 29 | KP2 - KP1 | Սյունիքի մարզ, Կապանից հյուսիս-արևմուտք ՀԿ | Սյունիքի մարզ, Կապանի ՀԿ | | |
| 30 | YE21-YE27 | Կոտայքի մարզ, Պտղնի | ք.Երևան, Դրոյի | | |
| 31 | YE07-YE38 | ք.Երևան, Ծովակալ Իսակով | Արմավիրի մարզ, «Զվարթնոց» օդանավակայան | | |
| 32 | YE55-YE14 | ք.Երևան, Խանջյան | ք.Երևան, Արշակունյաց | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33 | YE52-YE08 | ք.Երևան, Կիևյան | ք.Երևան, Հալաբյան | | |
| 34 | YE07-EG1 | ք.Երևան, Ծովակալ Իսակով | Արմավիրի մարզ, Էջմիածին | | |
| 35 | YE08-YE31 | ք.Երևան, Հալաբյան | ք.Երևան, Գևորգ Չաուշի | | |
| 36 | YE42-YE08 | ք.Երևան, Բաշինջաղյան | ք.Երևան, Հալաբյան | | |
| 37 | KJ1 - Kje | Սյունիքի մարզ, Քաջարան | Սյունիքի մարզ, Քաջարան | | |
| 38 | DI1 - Die | Տավուշի մարզ, Դիլիջան | Տավուշի մարզ, Դիլիջան | | |
| 39 | CH1-Che | Կոտայքի մարզ, Չարենցավան | Կոտայքի մարզ, Չարենցավան | | |
| 40 | MG1-Mge | Սյունիքի մարզ, Մեղրի | Սյունիքի մարզ, Մեղրի | | |
| 41 | SI1-Sie | Սյունիքի մարզ, Սիսիան | Սյունիքի մարզ, Սիսիան | | |
| 42 | SN1-Sne | Լոռու մարզ, Սանահին | Լոռու մարզ, Սանահին | | |
| 43 | SP1-Spe | Լոռու մարզ, Սպիտակ | Լոռու մարզ, Սպիտակ | | |
| 44 | ST1-ST2 | Լոռու մարզ, Ստեփանավան | Լոռու մարզ, Ստեփանավան | | |
| 45 | VK1-Vke | Վայոց ձորի մարզ, Վայք | Վայոց ձորի մարզ, Վայք | | |
| 46 | PU1-VA1 | Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք | Լոռու մարզ, Վանաձոր | | |
| 47 | YE14 – YE03 | ք.Երևան, Արշակունյաց | ք.Երևան, Բագրատունյանց | | |
| 48 | KP1 - Kpe | Սյունիքի մարզ, Կապան | Սյունիքի մարզ, Կապան | | |
| 49 | JK1-Jke | Վայոց ձորի մարզ, Ջերմուկ | Վայոց ձորի մարզ, Ջերմուկ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 50 | GO2-GO1 | Սյունիքի մարզ, Գորիս | Սյունիքի մարզ, Գորիս | | |
| 51 | YE08-YE15_SDH | ք.Երևան, Հալաբյան | ք.Երևան, Ազատության | | |
| 52 | YE15-YE05_SDH | ք.Երևան, Ազատության | ք.Երևան, Մոլդովական | | |
| 53 | YE13-YE02 | ք.Երևան, Աբովյան | ք.Երևան, Սարյան | | |
| 54 | YE70_MSC-YE04_SDH | ք.Երևան, Ֆրունզե | ք.Երևան, Ծերենց | | |
| 55 | YE02-YE10_SDH | ք.Երևան, Սարյան | ք.Երևան, Գալշոյան | | |

3) ռադիոռելեային կապի գծերի օգտագործման նպատակը՝ բջջային հեռախոսակապի կազմակերպում.

4) ռադիոռելեային կայանների տեսակը՝ թվային.

5) հաղորդչի  կրող ռադիոհաճախականության հզորությունը՝

| h/h | Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը | Հաղորդչի  կրող ռադիոհաճախականության հզորությունը (Վտ) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | YE08 - YE02 | |
| 2 | YE03 - YE11 | |
| 3 | VE1 - Vee | |
| 4 | AL1 - OZ1 | |
| 5 | AM1 - GU1 | |
| 6 | AVT1 - ART1 | |
| 7 | AS2 - AS1 | |
| 8 | AB1 - FA1 | |
| 9 | FA1 - HR1 | |
| 10 | HR1 - TS1 | |
| 11 | HR1 - SE1 | |

| | | |
|---|---|---|
| 12 | EG1 - MET1 | |
| 13 | CV1 - ST1 | |
| 14 | OZ1 - CV1 | |
| 15 | SN1- AL1 | |
| 16 | VA2 – VA1 | |
| 17 | CH1 – FA1 | |
| 18 | SI1 - GH1 | |
| 19 | GU2 - GU1 | |
| 20 | IJ1 – DI1 | |
| 21 | YE04-YE07 | |
| 22 | YE12-YE36 | |
| 23 | YE02-YE19 | |
| 24 | YE05-YE35 | |
| 25 | GRN1 – AVT1 | |
| 26 | YE05 – AB1 | |
| 27 | YE14-YE22 | |
| 28 | YE15-YE27 | |
| 29 | KP2 - KP1 | |
| 30 | YE21-YE27 | |
| 31 | YE07-YE38 | |
| 32 | YE55-YE14 | |
| 33 | YE52-YE08 | |
| 34 | YE07-EG1 | |
| 35 | YE08-YE31 | |
| 36 | YE42-YE08 | |
| 37 | KJ1 - Kje | |
| 38 | DI1 - Die | |
| 39 | CH1-Che | |
| 40 | MG1-Mge | |
| 41 | SI1-Sie | |

| | | |
|---|---|---|
| 42 | SN1-Sne | |
| 43 | SP1-Spe | |
| 44 | ST1-ST2 | |
| 45 | VK1-Vke | |
| 46 | PU1-VA1 | |
| 47 | YE14 – YE03 | |
| 48 | KP1 - Kpe | |
| 49 | JK1-Jke | |
| 50 | GO2-GO1 | |
| 51 | YE08-YE15_SDH | |
| 52 | YE15-YE05_SDH | |
| 53 | YE13-YE02 | |
| 54 | YE70_MSC-YE04_SDH | |
| 55 | YE02-YE10_SDH | |

6) հատկացված ռադիոհաճախականությունները (հաղորդման)՝

| h/h | Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը | Հատկացված ռադիոհաճախականությունները (ՄՀց) | |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | YE08 - YE02 | 14518,5 | 14938,5 |
| 2 | YE03 - YE11 | 15092,5 | 14672,5 |
| 3 | VE1 - Vee | 14980,5 | 14560,5 |
| 4 | AL1 - OZ1 | 14683 | 15103 |
| 5 | AM1 - GU1 | 14683 | 15103 |
| 6 | AVT1 - ART1 | 15103 | 14683 |
| 7 | AS2 - AS1 | 14543 | 14963 |
| 8 | AB1 - FA1 | 14728,5 | 15148,5 |
| 9 | FA1 - HR1 | 14672,5 | 15036,5 |
| 10 | HR1 - TS1 | 14543 | 14963 |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | HR1 - SE1 | 14627 | 15047 |
| 12 | EG1 - MET1 | 15092,5 | 14672,5 |
| 13 | CV1 - ST1 | 14627,5 | 15092,5 |
| 14 | OZ1 - CV1 | 14980,5 | 14565,5 |
| 15 | SN1- AL1 | 15148,5 | 14728,5 |
| 16 | VA2 – VA1 | 14627,5 | 15092,5 |
| 17 | CH1 – FA1 | 14963 | 14543 |
| 18 | SI1 - GH1 | 14571 | 14991 |
| 19 | GU2 - GU1 | 14599 | 15019 |
| 20 | IJ1 – DI1 | 14672,5 | 15092,5 |
| 21 | YE04-YE07 | 14627,5 | 15092,5 |
| 22 | YE12-YE36 | 15036,5 | 14616,5 |
| 23 | YE02-YE19 | 23135 | 22127 |
| 24 | YE05-YE35 | 14980,5 | 14560,5 |
| 25 | GRN1 – AVT1 | 14571 | 14991 |
| 26 | YE05 – AB1 | 14543 | 14963 |
| 27 | YE14-YE22 | 23158 | 22150 |
| 28 | YE15-YE27 | 14728,5 | 15148,5 |
| 29 | KP2 - KP1 | 14571 | 14991 |
| 30 | YE21-YE27 | 14672,5 | 15092,5 |
| 31 | YE07-YE38 | 14991 | 14571 |
| 32 | YE55-YE14 | 14665 | 15075 |
| 33 | YE52-YE08 | 23079 | 22071 |
| 34 | YE07-EG1 | 14728,5 | 15148,5 |
| 35 | YE08-YE31 | 15047 | 14627 |
| 36 | YE42-YE08 | 22246 | 23254 |
| 37 | KJ1 - Kje | 15103 | 14683 |
| 38 | DI1 - Die | 14991 | 14571 |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | CH1-Che | 15019 | 14599 |
| 40 | MG1-Mge | 14980,5 | 14565,5 |
| 41 | SI1-Sie | 14627 | 15047 |
| 42 | SN1-Sne | 22043 | 23051 |
| 43 | SP1-Spe | 15103 | 14683 |
| 44 | ST1-ST2 | 15047 | 14627 |
| 45 | VK1-Vke | 23086 | 22078 |
| 46 | PU1-VA1 | 14515 | 14935 |
| 47 | YE14 – YE03 | 14627 | 15047 |
| 48 | KP1 - Kpe | 14627 | 15047 |
| 49 | JK1-Jke | 22246 | 23254 |
| 50 | GO2-GO1 | 14571 | 14991 |
| 51 | YE08-YE15_SDH | 14935 | 14515 |
| 52 | YE15-YE05_SDH | 14543 | 14963 |
| 53 | YE13-YE02 | 22183 | 23191 |
| 54 | YE70_MSC-YE04_SDH | 14935 | 14515 |
| 55 | YE02-YE10_SDH | 14963 | 14543 |

7) ճառագայթման դասը՝ 16M0F7D.

8) տեղեկատվության հաղորդման արագությունը՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը | Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲիտ/վ) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | YE08 - YE02 | 8 x 2048 |
| 2 | YE03 - YE11 | 8 x 2048 |
| 3 | VE1 - Vee | 32 x 2048 |
| 4 | AL1 - OZ1 | 32 x 2048 |
| 5 | AM1 - GU1 | 32 x 2048 |
| 6 | AVT1 - ART1 | 32 x 2048 |

| | | |
|---|---|---|
| 7 | AS2 - AS1 | 16 x 2048 |
| 8 | AB1 - FA1 | 16 x 2048 |
| 9 | FA1 - HR1 | 16 x 2048 |
| 10 | HR1 - TS1 | 16 x 2048 |
| 11 | HR1 - SE1 | 16 x 2048 |
| 12 | EG1 - MET1 | 16 x 2048 |
| 13 | CV1 - ST1 | 32 x 2048 |
| 14 | OZ1 - CV1 | 32 x 2048 |
| 15 | SN1- AL1 | 16 x 2048 |
| 16 | VA2 – VA1 | 32 x 2048 |
| 17 | CH1 – FA1 | 16 x 2048 |
| 18 | SI1 - GH1 | 16 x 2048 |
| 19 | GU2 - GU1 | 16 x 2048 |
| 20 | IJ1 – DI1 | 32 x 2048 |
| 21 | YE04-YE07 | 32 x 2048 |
| 22 | YE12-YE36 | 32 x 2048 |
| 23 | YE02-YE19 | 16 x 2048 |
| 24 | YE05-YE35 | 16 x 2048 |
| 25 | GRN1 – AVT1 | 32 x 2048 |
| 26 | YE05 – AB1 | 16 x 2048 |
| 27 | YE14-YE22 | 16 x 2048 |
| 28 | YE15-YE27 | 16 x 2048 |
| 29 | KP2 - KP1 | 32 x 2048 |
| 30 | YE21-YE27 | 16 x 2048 |
| 31 | YE07-YE38 | 16 x 2048 |
| 32 | YE55-YE14 | 32 x 2048 |
| 33 | YE52-YE08 | 16 x 2048 |
| 34 | YE07-EG1 | 16 x 2048 |

| | | |
|---|---|---|
| 35 | YE08-YE31 | 16 x 2048 |
| 36 | YE42-YE08 | 32 x 2048 |
| 37 | KJ1 - Kje | 32  x 2048 |
| 38 | DI1 - Die | 32  x 2048 |
| 39 | CH1-Che | 16  x 2048 |
| 40 | MG1-Mge | 32  x 2048 |
| 41 | SI1-Sie | 32  x 2048 |
| 42 | SN1-Sne | 16  x 2048 |
| 43 | SP1-Spe | 32  x 2048 |
| 44 | ST1-ST2 | 32  x 2048 |
| 45 | VK1-Vke | 32  x 2048 |
| 46 | PU1-VA1 | 32 x 2048 |
| 47 | YE14 – YE03 | 32 x 2048 |
| 48 | KP1 - Kpe | 32 x 2048 |
| 49 | JK1-Jke | 32 x 2048 |
| 50 | GO2-GO1 | 32 x 2048 |
| 51 | YE08-YE15_SDH | 151,88 x 2048 |
| 52 | YE15-YE05_SDH | 151,88 x 2048 |
| 53 | YE13-YE02 | 16 x 2048 |
| 54 | YE70_MSC-YE04_SDH | 151,88 x 2048 |
| 55 | YE02-YE10_SDH | 151,88 x 2048 |

9) ռադիոհաճախականության կայունությունը՝  1 x $10^{-5}$.

10) անտենաների տեսակը, ուժեղացման գործակիցը, դիագրամի ուղղվածության լայնությունը, տրամագիծը՝

| հ/հ | Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը | Անտենայի տեսակը | | Ուժեղացման գործակիցը (դԲ) | | Դիագրամի ուղղվա-ծության լայնությունը (աստիճան) | | Անտենայի տրամագիծը (մ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կայան 1 | կայան 2 | կայան 1 | կայան 2 | կայան 1 | կայան 2 | կայան 1 | կայան 2 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | YE08 - YE02 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 2 | YE03 - YE11 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 3 | VE1 - Vee | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 4 | AL1 - OZ1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 5 | AM1 - GU1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 6 | AVT1 - ART1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 7 | AS2 - AS1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 8 | AB1 - FA1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 9 | FA1 - HR1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 10 | HR1 - TS1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 11 | HR1 - SE1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 12 | EG1 - MET1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 13 | CV1 - ST1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 14 | OZ1 - CV1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 15 | SN1- AL1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 16 | VA2 – VA1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 17 | CH1 – FA1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 18 | SI1 - GH1 | VHP6-142 | VHP6-142 | 46,0 | 46,0 | 1,5 | 1,5 | 1,8 | 1,8 |
| 19 | GU2 - GU1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 20 | IJ1 – DI1 | VHP6-142 | VHP6-142 | 46,0 | 46,0 | 1,5 | 1,5 | 1,8 | 1,8 |
| 21 | YE04-YE07 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 22 | YE12-YE36 | HP-06 | HP-06 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 23 | YE02-YE19 | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 24 | YE05-YE35 | HP-06 | HP-06 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 25 | GRN1 – AVT1 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 26 | YE05 – AB1 | HP-06 | HP-06 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 27 | YE14-YE22 | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 28 | YE15-YE27 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 29 | KP2 - KP1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 30 | YE21-YE27 | VHP4-142 | VHP4-142 | 42,7 | 42,7 | 1,7 | 1,7 | 1,2 | 1,2 |
| 31 | YE07-YE38 | HP-06 | HP-06 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 32 | YE55-YE14 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 33 | YE52-YE08 | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 34 | YE07-EG1 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 35 | YE08-YE31 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 36 | YE42-YE08 | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 37 | KJ1 - Kje | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 38 | DI1 - Die | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 39 | CH1-Che | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 40 | MG1-Mge | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 41 | SI1-Sie | HP-06 | HP-06 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 42 | SN1-Sne | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 43 | SP1-Spe | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 44 | ST1-ST2 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 45 | VK1-Vke | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 46 | PU1-VA1 | VHP2-142 | VHP4-142 | 37,4 | 42,7 | 2,1 | 1,7 | 0,6 | 1,2 |
| 47 | YE14 – YE03 | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 48 | KP1 - Kpe | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 49 | JK1-Jke | VHP1-220 | VHP1-220 | 34,9 | 34,9 | 2,5 | 2,5 | 0,3 | 0,3 |
| 50 | GO2-GO1 | VHP1-142 | VHP1-142 | 32,1 | 32,1 | 2,9 | 2,9 | 0,3 | 0,3 |
| 51 | YE08-YE15_SDH | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 52 | YE15-YE05_SDH | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 53 | YE13-YE02 | VHP2-220 | VHP2-220 | 40,1 | 40,1 | 1,8 | 1,8 | 0,6 | 0,6 |
| 54 | YE70_MSC-YE04_SDH | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |
| 55 | YE02-YE10_SDH | VHP2-142 | VHP2-142 | 37,4 | 37,4 | 2,1 | 2,1 | 0,6 | 0,6 |

5. Լիցենզավորված անձն պարտավոր է ռադիոհաճախականություններն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:
6. Թույլտվության 5 կետի խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել թույլտվության մեջ:

## 4. Լիցենզավորված անձի գործունեությունը

7. Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
8. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
9. Լիցենզավորված անձը պարտավոր է Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման տեխնիկական նախագծերը՝ երկու օրինակից:
10. Թույլտվության 9 կետով նախատեսված տեխնիկական նախագծերի ներկայացումից հետո թույլտվության պայմանները կարող են փոփոխվել:
11. Լիցենզավորված անձը պարտավոր է Թույլտվության պայմանների 4 կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:
12. Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծի շահագործումից առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
13. Լիցենզավորված անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց առաջ Լիցենզավորված անձը պարտավոր է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

14. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների արդյունավետ օգտագործումը:
15. Լիցենզավորված անձը պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:
16. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող գործունեությանն առնչվող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները և եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրը, Հանձնաժողով ներկայացնել ռադիոհաճախականությունների օգտագործման համար սահմանված ամենամյա վճարի մեկ քառորդի վճարումը հավաստող անդորրագիրը:
18. Լիցենզավորված անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
19. Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
20. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
21. Լիցենզավորված անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին:

Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

## 5. Գործունեության վերահսկում

23. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
24. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կամ նրա լիազոր ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել Հանձնաժողովին կամ նրա լիազոր ներկայացուցիչներին:
25. Հանձնաժողովի լիազոր ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են Լիցենզավորված անձի ներքին կանոնակարգը, անվտանգության կանոնները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:
26. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր ներկայացուցիչների միջոցով, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

## 6. Պատժամիջոցներ

27. Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր կողմից սահմանված կարգով կիրառել հետևյալ պատժամիջոցները՝
    1) տույժերի և տուգանքների կիրառում,
    2) Թույլտվության փոփոխում,

3) Թույլտվության կասեցում,

4) Թույլտվության գործողության դադարեցում:

28. Լիցենզավորված անձը Թույլտվության 27 կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

## 7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում

29. Ռադիոռելեային կապի գծերի շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:
30. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
31. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

## 8. Այլ պայմաններ

32. Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծերի շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծին, ինչպես նաև տվյալ բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և իրավական ակտերին համապատասխան:
33. Թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

## 9. Ծանուցում

34. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք

է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով: